# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 1-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, հաշվի առնելով, որ համայնքի 2014 թվականի բյուջեն կազմվել էր նախնական թվերով՝

**համայնքի ավագանին որոշում է**

Համայնքի ավագանու „Համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին,, 17 դեկտեմբերի 2013 թվականի N 57-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 10902.0 հազար դրամ գումարի չափով և սահմանել բյուջեի

ա/ եկամտային մասը՝ 199621.0 հազար դրամ,

բ/ ծախսային մասը՝ 199621.0 հազար դրամ:

2) Որոշման N1 հավելվածում „Պատվիրակված լիազորություններ,, տողն ավելացնել 1624.5 հազար դրամով, տարեսկզբի ազատ մնացորդը նախատեսել 9277.5 հազար դրամ:

Որոշման N 2 հավելվածում „Պատվիրակված լիազորություններ,, տողն ավելացնել 1624.5 հազար դրամով, „Տեղական ինքնակառավարման,, տողն ավելացնել 7277.5 հազար դրամով, „Գյուղատնտեսություն,, տողը՝ 2000.0 հազար դրամով:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդ համայնքի ավագանու
2014 թ. փետրվարի 4-ի
N 1-Ն որոշման

## 2014 թվականի համար սահմանված համայնքի եկամտատեսակները

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | Գումարը /Հազ. դրամ/ |
|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5500.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 14000.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4000.00 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 1500.00 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 8000.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 11000.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 53500,0 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 117970.20 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.50 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 3301.90 |
| 12 | ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ | 11212.90 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 136843.50 |
| 13 | ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 9277.50 |
| 14 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 6960.30 |
| 15 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 2717.20 |
| | ԱՄԲՈՂՋԸ | 199621.00 |

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

Հավելված 2

Բերդի համայնքի ավագանու
2014 թ. փետրվարի 4-ի
N 1-Ն որոշման

# Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
# 2014թ.

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | /Հազար դրամ/ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 52605.5 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 41235.0 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ | 22930.0 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 18782.0 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 47110.0 |
| 6 | ԱՅԼ ԾԱԽՍԵՐ | 500.0 |
| 7 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ, ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 3000.0 |
| 8 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ, ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 1500.0 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.5 |
| 10 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 2000.0 |
| 11 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3100.0 |
| 12 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 2500.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 199621.00 |

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 2-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ ենթակետով և 69-րդ հոդվածով

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2013 թվականի համայնքի բյուջեի կատարման մասին համաձայն N 1 և N 2 հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված 1*

*Բերդ համայնքի ավագանու 4 փետրվարի*
*2014 թվականի N 2-Ն որոշման*

## *2013 թ վականի համայնքի տեղական եկամուտներն ըստ առանձին հոդվածների*

*/հազար դրամ/*

| Հ/հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ | Տարեկան պլան /հազ.դրամ/ | Փաստացի | Կատարման % |
|---|---|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 6000.00 | 6008.00 | 100.13 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 13000.00 | 15052.40 | 115.79 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3000.00 | 3426.50 | 114.22 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4500.00 | 3300.00 | 73.33 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 1000.00 | 1278.70 | 127.87 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 4000.00 | 6739.80 | 168.50 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 10500.00 | 10870.00 | 103.52 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 4000.00 | 5763.90 | 144.10 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 46000.00 | 52439.30 | 114.00 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | | | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 111083.40 | 111083.40 | 100.00 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2733.50 | 2733.50 | 100.00 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 2132.80 | 2132.80 | 100.00 |
| 12 | ԿԱՊԻՏԱԼ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ | 2000.00 | 2000.00 | 100.00 |
| | ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ/աշխ+էլ.էներգիա/ | 8120.20 | 6117.40 | 75.34 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 126069.90 | 124067.10 | 98.41 |
| | Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը | 172069.90 | 176506.40 | 102.58 |
| 12 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 3605.30 | | |
| 13 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | | | |
| 14 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 3605.30 | | |

*Աշխատակազմի քարտուղար* [signature] *Ա. Մանկայան*

Հավելված 2

Բերդ համայնքի ավագանու 4 փետրվարի
2014 թվականի N 2-Ն որոշման

## Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

/հազար դրամ/

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Տարեկան ծախսերի նախահաշիվ | 2013թ. չորրորդ եռամսյակ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Տարեկան ճշտված պլան | Փաստացի կատարված ծախս | Կատար մաս % |
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 41454.2 | 46324.9 | 43809.1 | 94.57 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 21498.6 | 13409.6 | 12852.0 | 95.84 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 21616.2 | 21686.0 | 20443.9 | 94.27 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, Արվեստի դպրոց | 16282.5 | 14469.3 | 14461.3 | 99.94 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | 54422.4 | 67739.0 | 67256.0 | 99.29 |
| 6 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | 1000.0 | 689.6 | 689.6 | 100.00 |
| 7 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 500.0 | 965.0 | 965.0 | 100.00 |
| 8 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 4605.3 | 0.0 | 0.0 | 0.00 |
| 9 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 1782.5 | 0.0 | 0.0 | 0.00 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2733.5 | 2733.5 | 2731.7 | 99.93 |
| 11 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 2780.0 | 2660.0 | 2629.0 | 98.83 |
| 12 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4500.0 | 4500.0 | 4462.6 | 99.17 |
| 13 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 2500.0 | 493.3 | 498.3 | 100.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 175675.20 | 175675.20 | 170798.5 | 97.22 |

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamayng@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 3-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Համայնքային ծառայության մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովում ընդգրկել ավագանու 3 անդամներ՝ հետևյալ անձանց.

| | | |
|---|---|---|
| Աբգարյան | Անահիտ | Վոլոդյայի |
| Ներսիսյան | Արտուր | Կիմոյի |
| Քոսակյան | Գևորգ | Ռաֆիկի |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

**4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 4-Ա**

**ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ ենթակետով և հաշվի առնելով թիվ 2 մանկապարտեզում երեխաների խնամքի պայմանների փոփոխությունները՝

**համայնքի ավագանին որոշում է**

1.Թիվ 2 մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար սահմանել վճարի չափ՝ ամսական 3500 դրամ:

2.Ուժը կորցրած ճանաչել 2013 թ. դեկտեմբերի 17-ի N 49-Ա որոշմամբ թիվ 2 մանկապարտեզ հաճախող երեխաների համար սահմանված վճարը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 5-Ա

## „ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ„ ՀԿ-ԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԱԺ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, Հայաստանի ավագանիների ասոցիացիայի նախագահ Ա. Հովհաննիսյանի, 21 հունվարի 2014 թվականի N 16 գրությունը և հաշվի առնելով որ „Հայաստանի ավագանիների ասոցիացիա„ հասարակական կազմակերպությունը նպատակամետ աշխատանք է կատարում համայնքի ավագանիների ինստիտուտի կայացման ուղղությամբ

**համայնքի ավագանին որոշում է**

„Հայաստանի ավագանիների ասոցիացիա„ հասարակական կազմակերպության գործունեությանն աջակցելու նպատակով՝ կազմակերպության հաշվի համարին փոխանցել 50000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 6-Ա

## ՏԱՎՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ 0.04 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ „ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ„ ՊՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 26-ի N 911-Ն և Բերդ քաղաքային համայնքի ավագանու 2012 թ. դեկտեմբերի 24-ի N 41-Ա որոշումները

**համայնքի ավագանին որոշում է**

1.Բերդ քաղաքային համայնքի Սարալանջի 67 հասցեում գտնվող Տավուշի պատմության և կենցաղի թանգարանի շենքի զբաղեցրած ու նրա սպասարկման համար անհրաժեշտ 0.04 հեկտար հողամասն անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրել ՀՀ մշակույթի նախարարության „Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն„ ՊՈԱԿ-ին:

2.Հողամասի նկատմամբ գույքային իրավունքի պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել „Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն„ ՊՈԱԿ-ի հաշվին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamayng@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 7-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 3 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԿ ԱՌԵՎՏՐԻ ՄՐԱՀԸ ԵՎ ՄԵԿ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006 թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով՝

**Համայնքի ավագանին որոշում է**

1.Խորենացու 71/33 հասցեում գտնվող 56.4/48 քմ մակերեսով օժանդակ շինությունը 12320 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 25 քմ մակերեսով հողամասը՝ 20250 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Բյազում Քալանթարյանին:

2.Խորենացու 71/34 հասցեում գտնվող 5.16/4.8 քմ մակերեսով օժանդակ շինությունը 12320 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 25 քմ մակերեսով հողամասը՝ 20250 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ամալյա Չոբանյանին:

3.Մաշտոցի 13/2 հասցեում գտնվող 84.34/73 քմ մակերեսով օժանդակ շինությունը 185548 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 49.5 քմ մակերեսով հողամասը՝ 40095 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վիկտոր Ջումշուդի Թադևոսյանին:

4.Մաշտոցի 82/34 հասցեում գտնվող 31.15/23.3 քմ մակերեսով առևտրի սրահը 308385 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 31.15քմ մակերեսով հողամասը՝ 25232 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Խաչիկի Բուլղադարյանին:

5. Խորենացու 43/13 հասցեում գտնվող 40.68/34.61 քմ մակերեսով ավտոտնակը 44748 դրամով, նրա պահպանման ու սպասարկման 23.76 քմ մակերեսով հողամասը՝ 19246 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մարտին Շահբազի Մանուչարյանին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

4 ՓԵՏՐՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 8-Ա

## ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ 40 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, հաշվի առնելով, որ նշված հողամասերն ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Տալ համաձայնություն՝ Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության բնակավայրերի խառը կառուցապատման հողամասերից 40 քմ մակերեսով հողամաս աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-002-0072-0037:

Մեկնարկային գինը սահմանել 400000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան